— Դուք վկայեցէք, վարպետ, թէ ինչպէ՞ս են իմ աշակերտները, ամբողջ քաղաքում նրանց հատը կա՞յ:

— Ի հարկէ, չկա... — պատասխանեց վարպետը ծաղրական եղանակով: — Այսպիսի աշակերտներ միայն դուք կարող էք կրթել:

Պատոելին նրա խօսքերը ճշմարտի տեղ ընդունեց:

Մենք հեռացանք Սիմոն պատոելիի դպրոցից, տանելով մեզ հետ խիստ տխուր զգացմունքներ:

Տէր Թոդիկի դպրոցում հազար ու մէկ խստութիւններ, հազար ու մէկ կանոններ կային, բայց այդ բանը չկար, որ աշակերտների բերանը չափելով իմանային, թէ արդեօք նրանք դրսում խօսո՞ւմ են, թէ ոչ:

Երբ դուրս եկանք փողոցը, վարպետ Փանոսը ասաց Ասլանին:

— Եթէ գիտենայիք, թէ որքա՜ն աշխատել եմ, որքա՜ն չարչարոել եմ ես, որ մի կերպով այդ անպիտանին հեռացնեմ այդ դպրոցից, բայց հնար չի եղել:

— Ինչո՞ւ, — հարցրեց Ասլանը:

— Նա մի քանի հզօր պաշտպաններ ունի, ինչպէս նահանգապետ փաշան եւ սրբազան առաջնորդը:

— Այդ գարշելի արարածի մէջ ի՞նչ են գտել, որ պաշտպանում են նրան:

— Հէնց այն, որ նա գարշելի է: Չէք կարող երեւակայել մի մարդ, որ դրա չափ բարոյապէս փչացած եւ կեղտոտ լինէր: Կատարեալ եղեռնագործ է այդ անպիտանը: Նրան խեղդել պէտք է, եւ աւելի ոչինչ: Գիտէ՞ք, շատ երեկոներ նա ընտրում է իր աշակերտներից մի քանիսը եւ տանում է փաշայի մօտ. այնտեղ մնում են ամբողջ գիշերը, երգում են, պար են գալիս եւ զուարճացնում են փաշային...

— Լաւ՛ բարոյականութիւն կսովորեն... — ասաց Ասլանը խորին զզուանքով:

— Փաշան առաջ չգիտէր, թէ հայոց մանուկները քաղցր ձայն ունեն եւ լաւ տաղեր, երգել գիտեն. մի գիշեր նա հիւր է լինում նորին սրբազնութեան մօտ, տեսնում է այնտեղ մի խումբ մանկահասակ երգիչներ. շատ հաճելի են թւում նրան երգիչները, եւ երբ նորին սրբազնութիւնը նկատում է այդ, պատոիրում է Սիմոն պատոելիին, որ ամէն անգամ, երբ փաշան պահանջելու լինի, նա իր աշակերտներից ամենալաւ երգիչները տանէ նրա մօտ:

— Բայց ինչպէ՞ս են համբերում ծնողները: